# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***25-ը սեպտեմբերի 2019թ.***

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Արձ.- 31***

***/Զեկուցող՝ Վ. ՍԱՖԱՐՅԱՆ/***

***N 46 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 25.09.2019թ. արտահերթ նիստի օրակարգը /կցվում է/:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

***ԿՈՂՄ - 9*** ***ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0***

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. Ս Ա Ֆ Ա Ր Յ Ա Ն

***ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ***

# <u>**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**</u>

1. Աշտարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

   */Զեկուցող՝ Վ. Սաֆարյան/*
2. Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*
3. Աշտարակ համայնքի 2019թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*
4. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*
5. Աշտարակ համայնքի ավագանու 25.12.2018թ. N 3-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

   */Զեկուցող՝ Ս. Սահակյան/*
6. Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. N 37-Ա և N 38-Ա, 13.09.2019թ. N 44-Ա և N 45-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին:

   */Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*
7. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

   */Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*
8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

   */Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*
9. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

   */Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*
10. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին:

    */Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***25-ը սեպտեմբերի 2019թ.***

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Արձ.- 31***

***/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/***

***Ն 47– Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2019թ.-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18/5 և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32/5 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2019թ-ի տարեկան բյուջեի եկամտային մասին՝ համաձայն հատված 1-ի:

2. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2019թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասին՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:

3. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2019թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասին՝ համաձայն բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 3-ի:

4. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2019թ.-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:

5. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին՝ համաձայն հատված 5-ի:

6. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2019թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասին՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:

**/հազ. դրամ/**

| | ***Վարչական բյուջե*** | ***Ֆոնդային բյուջե*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 564780.8 | 0 | 564780.8 |
| Ծախսային մաս | 566807.1 | 11357.6 | 578164.7 |
| Դեֆիցիտ | -2026.3 | -11357.6 | 13383.9 |
| Պահուստային ֆոնդ | 10000.0 | 0 | 10000.0 |

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

***ԿՈՂՄ - 9*** ***ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0***

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. Ս Ա Ֆ Ա Ր Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***25-ը սեպտեմբերի 2019թ.***

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

***Արձ.- 31***

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 48 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով 2019թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 5-րդ կետերի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է.**

1. Համաձայնություն տալ Աշտարակ համայնքի 2019թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի միջոցներից 30 մլն դրամի չափով, ըստ անհրաժեշտության, ուղղել վարչական բյուջե՝ տարբեր բնագավառներում առաջացած ծախսերի ֆինանսավորման համար:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

***ԿՈՂՄ - 9*** ***ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0***

| | |
|---|---|
| **ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ** | **ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ** |
| **ԱԶԱՏ ՂԱՔԱՐՅԱՆ** | **ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ** |
| **ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ** | **ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ** |
| **ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ** | **ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** |
| **ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ** | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. Ս Ա Ֆ Ա Ր Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*25-ը սեպտեմբերի 2019թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 31*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 49 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի և հողի հարկի արտոնություն /հավելված 1/:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

***ԿՈՂՄ - 9*** ***ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0***

| | |
|---|---|
| **ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ** | **ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ** |
| **ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ** | **ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ** |
| **ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ** | **ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ** |
| **ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ** | **ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** |
| **ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ** | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. Ս Ա Ֆ Ա Ր Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***25-ը սեպտեմբերի 2019թ.***

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.12.2018Թ. N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 31*

*/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/*

***N 50 – Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի ավագանու 25.12.2018թ. N 3-Ն որոշման Հավելված 1/1-ի 11-րդ կետը ընդունել նոր խմբագրությամբ՝

| | | |
|---|---|---|
| 11 | Նախադպրոցական ուսումնական հիմնարկներ, հանրակրթական դպրոցներ, վարժարաններ, սպորտդպրոցներ, երաժշտական դպրոցներ | |
| | - 1 քմ-ի համար | 5 |
| | *Նախադպրոցական ուսումնական հաստատություններ* | |
| | - 1 քմ-ի համար | 5 |

***Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝***

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. Ս Ա Ֆ Ա Ր Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*25-ը սեպտեմբերի 2019թ.*

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.08.2019Թ. N 37-Ա ԵՎ N 38-Ա, 13.09.2019Թ. N 44-Ա ԵՎ N 45-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 31*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***N 51 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. N 37-Ա և N 38-Ա, 13.09.2019թ. N 44-Ա և N 45-Ա որոշումները:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ — ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ — ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ — ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ — ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. Ս Ա Ֆ Ա Ր Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***25-ը սեպտեմբերի 2019թ.***

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Արձ.- 31***

*<u>/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/</u>*

***N 52 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված 012-211 ծածկագրից 0,034հա և 859-039 ծածկագրից 0,000748հա հողամասերը փոխանցվել են որպես ֆիզիկական անձի սեփականություն, սակայն իրականում վերը նշված հողամասերը հանդիսանում են համայնքային սեփականություն, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 21 կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին '*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող, 012-211 ծածկագրից 340քմ և 859-039 ծածկագրից 7,48քմ մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերը ճանաչել համայնքային սեփականություն:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. Ս Ա Ֆ Ա Ր Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***25-ը սեպտեմբերի 2019թ.***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

***Արձ.- 31***

***/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/***

***N 53 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Ռուբիկ Գրիգորյանի և Արտավազդ Աբրահամյանի դիմումները, համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1 կետի 21-րդ ենթակետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է.**

1.Թույլատրել Աշտարակ քաղաքի Նարեկացու փողոցում գտնվող, 859-039 ծածկագրից 7,48քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը առևտրի տաղավար տեղադրելու համար կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Ռուբիկ Գրիգորյանին տրամադրելու 10 տարի ժամկետով՝ տարեկան 10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ վճարով:

2. Թույլատրել Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող, 843-001-ից ծածկագրից 12քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ավտոտնակի ընդլայնման համար կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Արտավազդ Աբրահամյանին տրամադրելու 19 տարի ժամկետով՝ տարեկան 5 000 /հինգ հազար/ ՀՀ դրամ վճարով:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

***ԿՈՂՄ - 9*** ***ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0***

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. Ս Ա Ֆ Ա Ր Յ Ա Ն